ԱՅԴ ՓԽՐՈՒՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏ ԱՂՋԿԸ

«Այս փխրուն աղջկա սրտում առյուծի սիրտ է դրված»: Ասաց բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը երեկ գրողների տանը Ցվետանա Պասկալեւայի՝ լրագրողների, մտավորականների հետ կայացած հանդիպման ժամանակ, նա կարողացավ միջազգային հասարակայնությանը ծանոթացնել ղարաբաղյան հիմնահարցին՝ արդարացիորեն եւ ի նպաստ մեզ:

Ջերմ խոսքով բուլղար լրագրողուհուն մասնակիցներին ներկայացրեց արձակագիր Մանուկ Մնացականյանը: Ցվետանան կարող է մտնել Գինեսի ռեկորդների գիրքը, ասաց նա, շատ քիչ է հանդիպում, երբ մի պետություն երեք անգամ մահապատժի է դատապարտում նույն անձին: Եվ այդ անձը Ցվետանա Պասկալեւան է, որն իր մարդկային խղճի թելադրանքով անկարելին արեց կնոջ իր փխրությամբ: Խոնարհվում ենք այս հզոր մարդու առաջ:

Անմիջական էր Ցվետանա Պասկալեւայի խոսքը մասնակիցներին: Ըստ գրողների միության քարտուղար Դավիթ Մուրադյանի՝ մենք ունենք ե՛ւ գեղեցիկ, ե՛ւ թանկագին հյուր: Ու հանդիպման մասնակիցները «թանկագին ու գեղեցիկ» այդ հյուրից չէին ուզում բաժանվել: Հարցեր էին տալիս, արձագանքում: Եվ «տեսախցիկով կինը», որ լեգենդի է վերածվել Արցախում, սիրելին էր արդեն մասնակիցների:

«Ես հիմա ձեր առաջ եմ,– ներկայացավ Ցվետանա Պասկալեւան,– միշտ Ղարաբաղում եմ եւ ամեն օր տեսնում եմ իմ հերոսների աչքերը: Ես նրանց հետ եմ: Բայց ես կուզենայի տեսնել եւ իմ մյուս՝ հայաստանյան կողմին: Ես գիտեմ, լույս չունեք, փոխադրամիջոցն անխափան չէ, դժվարությունների մեջ եք եւ ձեր համար եւս դժվար է: Եվ պիտի ասեմ, որ դրանք հաղթահարելի են ու ինչ ցնծություն ենք ապրելու հաղթանակից հետո»:

Անցնելով ղարաբաղյան թեմային, Պասկալեւան շարունակեց իր միտքը. «Հաճախ են հարցնում արդյո՞ք կինովավերագրողի, օպերատորի, լրագրողի, ռեժիսորի փառասիրությունն է ինձ բերել Ղարաբաղ: Ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Եթե կա մեկը, որն ունի գրելու, նկարահանելու տաղանդը, այդ եռանդը, թող նա անի՝ ուրախ կլինեմ: Բայց ինձ քաշողը ղարաբաղցիներն են, այդ ժողովուրդը, այդ մաքուր, պարզ ժողովուրդը, որոնց խաբել ես չեմ կարող, եւ որոնց հետ մինչեւ վերջ եմ գնալու: Ես նրանց հետ եմ մնալու՝ մինչ հաղթանակ»:

Հանդիպման մասնակիցները հուշանվերներ հանձնեցին բուլղարուհի լրագրող, Արցախի դուստր Ցվետանա Պասկալեւային:

ԱԳ